ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 02

<<ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/01>> ԾԱԾԿԱԳՐՈՎ <<01.20.2023 թ.>> ԿՆՔՎԱԾ <<ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ>> ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Հրազդան **«22» նոյեմբերի 2023թ.**

Հրազդանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Ս.Միքայելյանի. որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<**ԼԱՐԳՈ ՎԻՆՉ>> ՍՊԸ-ն**, ի դեմս **տնօրեն Վ.Ասատրյանի,** որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ «Կողմեր»), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. **Համաձայնագրի առարկան**

1.1. Հիմք ընդունելով կողմերի միջև **2023թ.հունվարի 20-ին** կնքված <<Սեղմված բնական գազ>>-ի ձեռքբերման մատակարարման <<**ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/01**>> ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ով, հետագա համագործակցության համար կողմերը սահմանեցին սույն համաձայնագիրը՝ պայմանագրի գինը ավելացնել 270 000/երկու հարյուր յոթանասուն հազար/ ՀՀ դրամով:

1.2 Պայմանագրի ընդհանուր գինը կկազմի 53 920 200 /հիսուներեք միլիոն ինը հարյուր քսան հազար երկու հարյուր/ ՀՀդրամ:

1.1.1 Պայմանագրի N 1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ի փոփոխված տարբերակի հավելվածը կցված է համաձայնագրին:

1.1.2 Պայմանագրի N 2 «Վճարման ժամանակացույց» հավելվածը սահմանել հետևյալ կարգով /կցված է/ համաձայնագրին:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը՝

2.1 Համաձայնագրի պայմանները կիրառվում են պայմանգիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

2.2 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

3.Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակներից (յուրաքանչյուրը բաղ-կացած է երկու թերթից և հավելվածներից), որոնցից մեկ օրինակը հանձնվում է Պատվիրատուին, իսկ մյուս օրինակը՝ Կատարողին:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ՎԱՃԱՌՈՂ
Հրազդանի համայնքապետարան	**<<Լարգո Վինչ>> ՍՊԸ**
Ք.Հրազդան, Սահմանադրության	**ք.Հրազդան , Հայ ֆիդայիների**
հրապարակ 1 վարչական	**«Ամերիա Բանկ» ՓԲԸ**
Հրազդանի ՏԳԲ	**ՀՀ 1570069726550100**
Հ/Հ 900122001465	**ՀՎՀՀ 03022566**
ՀՎՀՀ 03027114	
Digitally signed by MIKAYELYAN SEVAK 4004930197 Date: 2023.11.21 15:51:27	Digitally signed by MARTIROSYAN SERZH 1807990346 Date: 2023.11.21
----------Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ	-------- Վ.ԱՍԱՏՐՅԱՆ